

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՆՈՐԱՅԱՅՏ ՓԱՍՏԵՐ ԳՐԻԿՈՐ ՏՂԱՅԻ ԿԵԱՆՔԻ
ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ*

Նուիրում է Հայաստանում ֆրիստոնէութեան
պետականացման 1700 ամեակին

2. Ղ. ՄԻՐՁՈՅԵԱՆ

Գրիգոր Տղան միջնադարի մեր այն սակաւաթիւ գործիչներից է, որոնց համբար դեռ իրենց կենդանութեան ժամանակ դուրս է եկել տեղական շրջանակներից՝ ձեռք բերելով միջազգային ճանաչում: Բաւական է ասել, որ նա շուրջ քսանամեայ իր կաթողիկոսութեան շրջանում (1173—1193 թթ.) նամակագրական կապեր է ունեցել բիւզանդական Մանուէլ եւ Իսահակ կայսրերի, Միքայէլ պատրիարքի, Հոռմի Լուցիոս եւ Կղեմէս պապերի, գերմանական կայսր Ֆրեդերիկ Շիկամորուսի, Եգիպտոսի տիրակալ Սալահադդինի եւ այլոց հետ: Աւելին, համագործակցելով, իսկ երբեմն եւ հակադրուելով Լեւոն Մեծագործին, նա գործուն մասնակցութիւն է ունեցել Կիլիկիայի հայոց պետականութեան ամրապնդման ու թագաւորութեան հաստատման պատմական գործընթացին: Վերջապէս, իբրեւ բանաստեղծ ու մատենագիր, նա անուրանալի հետք է թողել հայ բազմադարեան գրականութեան ու մատենագրութեան հարուստ անդամատանում:

Ինքնըստինքեան հասկանալի է, որ այսպիսի բազմաբեղուն գործչի մասին կենսագրական, առաւել եւս ինքնակենսագրական, իւրաքանչիւր նորայայտ փաստ կամ տեղեկութիւն կարող է շահաւէտ լինել հայագիտութեան համար: Եւ բնաւ պատահական չէ, որ նրա կեանքը, գործունէութիւնը եւ գրական ժառանգութիւնը վաղուց ի վեր արժանացել են հայ, մասամբ եւ օտարազգի հայագէտների ուշադրութեանը: Այդ տեսակէտից բացառիկ արժէք ունի միջնադարեան հայ գրականութեան ու մշակոյթի անխոնջ հետազօտող Ասատուր Մնացականեանի աշխատասիրած գիրքը¹, որտեղ առաջին անգամ ի մի են բերուած հայագիտական, գրականութեան մէջ նրա մասին առկայ գրեթէ բոլոր քիչ թէ շատ արժէքաւոր տեղեկութիւններն ու կարծիքները, ձեռագիր ու տպագիր աղբիւրներից հաւաքուած, ամբողջացուած ու գիտական բժախնդիր բարեխղճութեամբ կազմուած քննական բնագրերով հրատարակուած են նրա ցարդ յայտնի արձակ եւ շափածոյ բանաստեղծութիւններն ու պօէմները, որոնց զգալի մասը յայտնաբերել է անձամբ աշխատասիրողը:

Պարզում է, որ հենց վերջիններիս մէջ միջնադարի հասարակական-քաղաքական ականաւոր գործիչն ու բանաստեղծը յայտնում է ինքնակենսագրական արժէքաւոր փաստեր ու տեղեկութիւններ, որոնք վրիպել են թէ Ա. Մնացականեանի եւ թէ միւս հայագէտների ուշադրութիւնից: Մինչդեռ դրանց ի-

* Հոդվածը լրամշակված ու նոր տվյալներով հարստացված տարբերակն է «Սիոն» ամսագրում (1996, № 10—11—12) տպագրվածի:

¹ Տե՛ս «Գրիգոր Տղայ, բանաստեղծութիւններ եւ պօէմներ», աշխատասիրութեամբ Ա. Մնացականեանի, Երևան, 1972:

մացութիւնը, համոզուած եմ, կարող էր էպպէս փոխել յիշեալ գրքի մի շարք հարցադրումներ ու դրանց տրուած պատասխաններ եւ յատկապէս նրա կառուցուածքը:

Ա. Մնացականեանը, ելնելով որոշակի սկզբունքներից, Գրիգոր Տղայի շափածոն բաժանել է երկու խմբի՝ կանոնաւոր տաղաշափութեամբ գրուածներ եւ արձակ բանաստեղծութիւններ, որոնցից ամէն մէկն իր հերթին՝ երկու ենթախմբի: Ներկայ դէպքում մենք հիմնականում գործ ենք ունենալու դրանցից երկրորդ խմբի առաջին ենթախմբի հետ, որը բաղկացած է հինգ բանաստեղծութիւնից: Աշխատասիրողը դրանք դիտելով «մի ամբողջութիւն», հետեւաբար՝ «մի պօէմ», անուանել է «Ողբաշարք»: Հնարաւոր թիրիմացութիւններից խուսափելու համար մենք նոյնպէս այսուհետեւ գործածելու ենք «Ողբաշարք» հասկացութիւնը: Ասենք նաեւ, որ թէեւ Մաշտոցի անուան մատենադարանի թիւ 5707 ձեռագրում այդ Ողբաշարքը զետեղուած է Գրիգոր Տղայի ստեղծագործութիւնների սկզբնամասում, բայց Ա. Մնացականեանը, դա համարելով ձեռագիրն ընդօրինակող գրչի ցանկութեան արդիւնք, հրատարակութեան պատրաստելիս մասամբ վերադասաւորել է դրանք՝ հիմք ընդունելով Մաղնիսիայի ձեռագրի Տ. Պալեանի նկարագրութիւնը: Իսկ թէ որքանով է ճիշտ կամ սխալ այդ մօտեցումը, կը տեսնենք յետոյ:

Այժմ տեսնենք, թէ ինքնակենսագրական ինչ նոր տեղեկութիւններ է յայտնում Գրիգոր Տղան եւ գիտական տեսակէտից ինչ արժէք ունեն դրանք: Դրանցից ամենակարեւորը, իմ կարծիքով, ամփոփուած է Ողբաշարքի հինգերորդ ողբի հետեւեալ երկու տողում.

Եւ թէ ի բազմէն հնգիւ պակասեալ, տասանց նուազեալ,
Ի քսան յանկուցեալ, ի տասն առկցեալ²:

Առաջին հայեացքից թուում է, թէ բանաստեղծն այս ամէնը գրել է պարզապէս յանգի ու շափի համար, մինչդեռ իրականում այստեղ գործածուած թուերով ու թուաբանական գործողութիւններով՝ «բազմէն», «հնգիւ պակասեալ», «տասանց նուազեալ», «քսան յանկուցեալ», «տասն առկցեալ», միջնադարում լայն կիրառութիւն ունեցած ծածկագրութեան եղանակով յայտնել է ինքնակենսագրական կարեւոր տեղեկութիւն: Այն հասկանալու եւ վերծանելու համար պէտք է ելակէտ դարձնել «բազմէն» բառը, որովհետեւ, ինչպէս տեսնում ենք, բոլոր թուերն ու գործողութիւնները սերտօրէն առընչակցուում են դրան: Իսկ ի՞նչ է նշանակում «բազում» բառը, որի հոլովուած ձեւն է «ի բազմէն» բառակապակցութիւնը: Թվում է, նոյնիսկ աւելորդ է յիշեցնել, որ «բազում» բառը հայոց լեզուում միշտ գործածուել է նոյն իմաստով եւ նշանակել է շատ: Փաստօրէն այն ունի խիստ անորոշ բովանդակութիւն, որով, հասկանալի է, թուաբանական ոչ մի որոշակի գործողութիւն կատարել չենք կարող: Մնում է ենթադրել, որ բանաստեղծը որոշակի իմաստ է դրել այս բառի ոչ թէ բովանդակութեան, այլ ձեւի մէջ: Իսկ բառի ձեւ ասելով ներկայ դէպքում հասկանում ենք հայոց այբուբենից նրանում գործածուած տառերը, որոնք, հանրայայտ է, ունեն նաեւ թուային արժէքներ: Ըստ այդմ «բազմէն» բառի տառերի փոխարէն տեղադրելով իրենց թուային արժէքները՝ բ(2) + ա(1) + զ(6) + մ(200) + է(7) + ն(400), արդիւնքում կը ստանանք 616: Այնուհետեւ կատարելով բանաստեղծի թելադրած թուաբանական գործողութիւնները՝ «հնգիւ պակասեալ», «տասանց նուազեալ», «քսան յան-

² Գրիգոր Տղայի ստեղծագործութիւններից այս եւ հետագայ մէջերիւմները կատարում ենք Ա. Մնացականեանի աշխատասիրած յիշեալ գրքից՝ փակագծերում նշելով էջը եւ տողերը (401, 185—186), իսկ նախաբանից վկայակոչումների դեպքում՝ միայն էջը:

կուցեալ», «տասն առկցեալ», կը ստանանք թուաբանական հետեւեալ վարժութիւնը՝ 616-5-10+20+10, որը հաւասար է 631 թ.: Հասկանալի է, որ բանաստեղծը հայերէն տառերով թուական արտայայտելու համար պէտք է հիմք ընդունած լինի հայկական տոմարը, ուստի ստացուած 631 թ. համաբրիստոնէական տոմարով արտայայտելու համար գումարենք 551: Կարող ենք ասել, որ գտնուած է ելակէտային շատ կարելոր տարեթիւ՝ 1182 թ., որը, անշուշտ, տուեալ Ողբաշարքի արարտման թուականն է³: Ասենք, նաեւ, որ սա, ըստ էութեան, Գրիգոր Տղայի կողմից յայտնուած ինքնակենսագրական առաջին կամ հնագոյն ստոյգ տարեթիւն է, որով աւելի է կարելորում դրա նշանակութիւնը:

Այս առաջին կարելոր տեղեկութիւնից յետոյ բանաստեղծը, կարծես չը-ցանկանալով միանգամից յայտնել նոր փաստեր, ընթերցողին նախապատ-րաստելու, նրա ուշադրութիւնը սրելու համար վերը բերուած սողերից ան-միջապէս յետոյ շարունակում է.

Վոր եւ շունիմ ինչ սսել թշուառականիս անձին եղկելոյ,
Նղեռնագործի եւ թարմատարի, եթէ եւ յայսմանէ
Վրիպիցիմ, Բանգի գինչ ինձ վատբարութիւն անհանճար
Կուրիս խոնկապման արդեօք շարութեան այս պակասման,
Որով եւ թէ դործք բարեաց հետացան, փախուան եւ արշաւեցին
Վանքան ընթացումն, սակայն այսուիկ շափով զգայութեամբք
Ի ուր իմովս անդամօք խաբելաւս եւ պատեալս,
Ի հիգոյն հէզս, կափուցեալ մտօք, կուրացեալ հոգով,
Խաւարեալ անձամբ, մեռտեալ սրտիւ, յիմարեալ բնութեամբ,
Մթնացեալ ստուերաւ, հեշտացեալ, մեալ, մղեղեալ
Եւ յաղչամուղչս տատանեալ,
Այլ եւ բարբառիմ մասնիկովք իմովք երեւեալ,
Կացեալ առաջի հեզոյդ եւ սրբոյդ մարդասիրիդ
Եւ բարեբարիդ ողորմածիդ եւ պարգեւողիդ,
Փտեմ եւ հայցեմ առնույ, որ ձրի տաս ամենեցուն.

(էջ 401-402, տ. 187-201)

Եթէ փորձենք այս ինքնաբնութագրական սողերից պատկերացում կազ-մել հեղինակի անձի, նրա առողջական վիճակի, մտաւոր ու մարմնական կա-րողութիւնների մասին, ապա, կարծում եմ, իրաւունք ունենք ասելու, յամե-նայնդէպս ինձ այդպէս է թուում, որ այդ թուականին նա եղել է այն տարի-քում, երբ մարդուս առողջական վիճակն սկսում է լրջօրէն վատանալ, մտա-ւոր ու մարմնական կարողութիւններն զգացնել են տալիս իրենց առաջին տկարացումները, ուստի ողջախոհ ամէն ոք փորձում է սթափ հայեացք նե-տել իր անձին ու անցած ուղուն, հանրագումարի բերել ունեցած կորուստնե-րըն ու ձեռքբերումները, հոգեպէս նախապատրաստուել առաջիկայ ցնցում-ներին ու փոթորիկներին, որոնց կարող է անսպասելիօրէն զոհ դառնալ ար-դէն «մրեալ, մղեղեալ, եւ յաղչամուղչս տատանեալ» անձնաւորութիւնը, քանզի երկկոյնան աղչամուղչին վաղ թէ՛ ուշ յաջորդում է գիշերուայ խա-ւարը:

Հնարաւոր է, որ այս ընդհանրացումն արդիւնք է զուտ անձնական տը-պաւորութեան, իսկ մէկ ուրիշը կարող է ստանալ միանգամայն այլ տպաւո-րութիւն, կատարել ուրիշ եզրակացութիւն: Բարեբախտաբար բանաստեղծը նման տարբերումների ու տարակարծութիւնների տեղ չի թողնում եւ, չը-գոհանալով արդէն ասուածով, անմիջականօրէն յաջորդող սողերում մատու-

³ Ի դէպ՝ Ա. Մնացականեանը սոյն Ողբաշարքի շրրորդ ողբի բովանդակութեան վերլու-ծութեան հիման վրայ իրաւամբ եզրակացրել է, որ նշուած «ողբը, հետեւաբար եւ ողջ պօմը գրուած է հաւանաբար 1180-ական թուականներին» (էջ 126):

ցում է մի նոր անակնկալ՝ յայտնում է այդ թուականին իր ունեցած տարի-
քը, որին պարտ ու պատշաճ են թէ վերը բերուած խոսվայոյզ ինքնարնու-
թագրումները եւ թէ դրանցից իմ ստացած տպաւորութիւնն ու կատարած
ընդհանրացումը: Նա գրում է.

Առեալ ընդ իմ գասացեալս բիւ՝ զհինգս ճեզիւք բարդեալ
Եւ ունակացն երկուց միակաց ըստ եզականին եքնակայից ճոցին կրողաց,
Որ եւ քով երկոտասանք բերեալ տեսներն ընծայ եւ ճուէր
Եւրախայրեաց Տեսունդ մատուցի

(էջ 402, տ. 202—205)

Նախ՝ բացենք այստեղ ծածկագրուած թուերն ու թուաբանական գործո-
ղութիւնները. «զհինգս հնգիւք բարդեալ», նշանակում է 5×5 , «եւ ունակացն
երկուց միակաց ըստ եզականին» արտայայտութիւնը պէտք է կարդալ՝ 11,
որն, իսկապէս, բաղկացած լինելով երկու մէկերից, կենտ թիւ է, «ենթա-
կայից նոցին կրողաց» ասելով հասկանում է 10 թիւը, որը, իրօք, 11ի կրող
ենթական է: Վերջապէս, այդ ամէնից ստացուած արդիւնքին պէտք է աւե-
լացնել 12, որովհետեւ բանաստեղծն ասում է՝ «որ եւ թուով երկոտասանք
բերեալ»: Այժմ կատարենք պահանջուած գործողութիւնները՝ $5 \times 5 + 11 + 10 +$
 $+ 12$, կը ստացուի 58, որը, հարկաւ, Ողբաշարքի աւարտման թուականին՝
1182 թ., Գրիգոր Տղայի ունեցած տարիքն է: Արդէն ունենալով այս երկու
կարեւոր տուեալը, կարծում եմ, շատ հեշտ է որոշել նրա ծննդեան թուա-
կանը՝ $1182 - 58 = 1124$ թ.: Ի միջի այլոց, Գրիգոր Տղայի կեանքին ու գոր-
ծունէութեանն անդրադարձած հայագէտներից որպէս նրա ծննդեան տարե-
թիւ այս թուականն է առաջարկել նաեւ Գ. Յակոբեանը⁴, որը, սակայն, իր
տեսակէտը հիմնաւորելու համար իրբեւ կոուան ընդունել է 1138 թ. Մովքի
ամրոցը պաշտպանելիս Գրիգոր Տղայի հօր՝ Վասիլի, սելջուկներից գերեվա-
րուելու փաստը: Բայց քանի որ պատմական սկզբնաղբիւրները (Մատթէոս
Ուռհայեցի եւ Սմբատ Սպարապետ) Վասիլի գերուելը նշում են 1149 (ՇՂԸ)
թուականին, ուստի Ա. Մնացականեանը կտրականապէս մերժում է նրան՝ ա-
ռաջարկուած թուականը համարելով «մեխանիկական ծագում ունեցող» թիւ-
րիմացութեան արդիւնք:

Գրիգոր Տղայի Ողբաշարքի վերջին ողբից վերը բերուած հատուածը պա-
րունակում է ինքնակենսագրական մէկ ուրիշ արժէքաւոր տեղեկութիւն եւս.
Վերջին տողում բանաստեղծն այս Ողբաշարքը կոչելով իր ստեղծագործա-
կան հանճարի «երախայրիք», որ նշանակում է «առաջին խայրիք, նախկին
բերք, այսինքն՝ նուիրականք, առաջին պտուղ, կանուխ հասած բերքը...»⁵,
«ընծայ եւ նուէր» է մատուցում «հեզ», «մարդասէր», «բարերար», «ողոր-
մած», «պարգեւող», «ամենքին ձրի տուող» Աստծուն: Ընդ որում, նա դա
մատուցում է ոչ միայն որպէս իր երախայրիք, ուստի եւ նուիրական ու շատ
թանկագին բան, այլեւ, ինչպէս ինքն է ասում, որպես

...խունկ անուշահոտ, պատարագ ընդունելի, ճատ յիշատակաց,
Պտուղ քաղցրահաշակ, սերմ բարութեան,
Ողկոյզ բարունակատուր, ողջակէզ խորհրդական,
Հաց կենդանական՝ ի քէն ընկալեալ եւ քեզ մատուցեալ

(էջ 402, տ. 206—209)

⁴ Տե՛ս Գ. Յակոբեան, Գրիգոր Տղա, «էջմիածին», 1965, Ա, էջ 31:

⁵ «Նոր հայագեան բառգիրք. սրբագրուած եւ ճոխացուած նորայր Բիւզանդացու ձեռքով», հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, հ. 2, Ժնև, 1990:

Հնդ սմին դիտելի է, որ Ողբաշարքի սկզբնամասում, իբրև ստեղծագործական առաջին քայլերը կատարող բանաստեղծ, նա մի տեսակ երկչոտ ու վախուժութիւն է. զգում է ասելիքի անորոշութիւն ու ներքին կաշկանդութիւն, եւ այդ վիճակը տեսում է բաւական երկար: Այդ է վկայում թէկուզ եւ այն փաստը, որ շարքի երրորդ ողբում, 'կարծես դեռ շիմանալով իր անելիքը, 'Աստծուն է դիմում իմանալու համար, թէ «զինչ մատուցից քեզ ընծայս. եւ կամ զինչ եղից առաջի քոյ նուէրս»: Իսկ ահա Ողբաշարքի աւարտին, ազատուելով այդ ամենից, վստահութեամբ ազդարարում է, թէ «ընծայ եւ նուէր երախայրեաց Տեառնդ մատուցի»:

Այնուհետեւ բանաստեղծը, թւում է, շփտահեղուկ ընթերցողին, որ կարող է հասկանալ ծածկագրութեամբ մէկ անգամ արդէն յայտնուած տեղեկութիւնը, յատուկ հրաւիրում է 'նրա աշխարհութիւնը իր ասելիքի վրայ եւ նոյնը կրկնում այլ միջոցներով ու այլ տուեալներով.

Եւ արդ անա կրկնեալ զսոսա,
 Ըստ բոտյ եզականց խորհրդոց աշակերտացն,
 Հանդերձ վերնայարկ երկնից կամարացն խորանացն բնակաց:
 Հրեշտակերամ դասուց Երչանկացն
 Եւ զգայական վերնկառոյց Երբերբաց լուսալծակացն

(էջ 403, տ. 210—214)

Պարզէ ի պարզ երեւում է, որ այս ծածկագրութիւնը կազմելիս բանաստեղծը հիմք է ընդունել միջնադարեան աստղաբաշխական ու կրօնական պատկերացումները, ուստի ելնելով դրանցից, կարող ենք «ըստ թուոյ եզականաց խորհրդոց 'աշակերտացն» արտայայտութեան փոխարէն նշանակել 27, «վերնայարկ երկնից կամարացն»-ի փոխարէն՝ 7, համապատասխանաբար 7 էր նաեւ «խորանացն բնակաց»-ի թիւը, «հրեշտակերամ դասուց երջանկացն»-ի թիւը հաշուում էին 9, «զգայական վերնկառոյց եթերընթաց»-ի թիւը՝ 7, վերջապէս, «լուսալծակացն»ը, պարզ է, 1 էր: Գումարելով նշուած թիւերը՝ 27 + 7 + 7 + 9 + 7 + 1, նորից ստանում ենք 58: Բայց չգոհանալով նաեւ «կրկնեալ»ով, հնարամիտ բանաստեղծը կէս-աստղաբաշխական, կէս-թուագիտական տուեալներով նոյնը յայտնում է երրորդ անգամ.

Արփիանանն ընդ զարդեկաց:
 Այլ եւ երկնայնովքս նմին յատակի բուսոփ
 Եւ տնկոփ սորայս բողբոջի:
 Առ Բեզ բարեխօս բերեալ կացուցի երից տասանց բուց
 Միակաց խառնեալ ընդ սոսա, զոր աստ բնականփ

(էջ 403, տ. 215—219)

Նորից հիմք ընդունելով միջնադարեան պատկերացումները, «արփիանանն ընդ զարդեկաց» արտայայտութեան փոխարէն կարող ենք նշանակել 7, «երկնայնովքս նմին յատակի բուսոփ»ը, բնականաբար, որպէս առաջինի յատակին բուսած, նոյնպէս կը լինի 7: Ճիշտ է, այս երկուսի գումարը կը լինի 14, բայց դրանից պէտք է վերցնել միայն 4ը, որովհետեւ բանաստեղծն ասում է՝ «եւ տնկօք սորայս բողբոջի», այսինքն՝ 10ը համարում է դրանց գումարից գոյացած «տունկը», իսկ 4ը՝ այդ տնկի վրայ բուսած «բողբոջը»: Վերջապէս, «երից տասանց թուոց միակաց խառնեալ ընդ սոսա, զոր աստ բնականք» միտքը պէտք է հասկանալ որպէս 13ի մէջ պարունակուող բնական պարզ թուերի գումար, որը հաւասար է՝ $1+3+5+7+11+13=40$: Ի մի բերելով վերը բացայայտուած թուերը՝ $7+7+4+40$, նորից կը ստանանք 58:

Այսպիսով, կարծում եմ, անառարկելիորէն ապացուցուած կարող ենք համարել, որ 12րդ դարի բարձրաստիճան Թեղեցական, հասարակական-քա-

դաքական ականաւոր գործիչ ու նշանաւոր բանաստեղծ Գրիգոր Գ. Տղայ Պահլաւունին ծնունդ է ոչ թէ 1133թ., ինչպէս ընդունուած է հայապիտական գրականութեան մէջ, այլ 1124թ.: Ըստ այդմ 1173թ. նա հայոց հայրապետ է ընտրուել ոչ թէ շուրջ 40ամեայ, այլ 49ամեայ տարիքում, ուստի եւ շուրջ 20 տարի կաթողիկոսելուց յետոյ 1193 թ. մահացել է ոչ թէ շուրջ 60ամեայ, այլ 69ամեայ հասակում: Իսկ եթէ նկատի ունենանք, որ միջնադարում մարդու կեանքի միջին տեւողութիւնն անհամեմատ աւելի կարճ էր, քան մեր օրերում, ապա, կարծում եմ, լիովին իրաւունք ունենք Գրիգոր Տղայի մահը համարելու բնական, առաւել եւս, եթէ հաշուի առնենք, որ դրանից 11 տարի առաջ, ինչպէս տեսանք վերը, նա արդէն բողոքում էր իր մտաւոր ու մարմնական տկարացած վիճակից: Ես յատուկ ուշադրութիւն եմ հրաւիրում այս ամէնի վրայ, որովհետեւ պատմական սկզբնաղբիւրների անորոշ ու կցկտուր ինչ-ինչ տեղեկութիւնների հիման վրայ որոշ հայագէտներ եզրակացնում են, որ «հաւանաբար Գրիգոր Տղան մեռել է անբնական մահով» (էջ 27) եւ որ դրանում մեղք է ունեցել Լեւոն Մեծը (տե՛ս էջ 24—29): Անշուշտ, որպէս պետական, քաղաքական ու ռազմական հզօր գործիչ, իր քաղաքական հեռագնայ ծրագիրն իրականացնելու, Կիլիկեան հայոց թագաւորութիւն հաստատելու համար Լեւոն Մեծը գործել է նաեւ մեղքեր՝ նրա գիտութեամբ կամ հրամանով հոսել է մարդկանց արիւն, կրճատուել կեանքեր: Ուրեմն, եթէ պիտի մեղադրենք նրան, ապա պէտք է մեղադրենք իր կատարածի եւ ոչ թէ շրջկատարածի համար:

Այժմ, երբ աւարտել եմ Գրիգոր Տղայի ծածկագրութիւնների վերծանումը, բացայայտել նրա յայտնած ինքնակենսագրական վերը նշուած փաստերը, կ'ուզենայի անդրադառնալ այն հարցին, թէ արդեօք ճիշտ է վարուել Ա. Մնացապետեանը, որ մերժելով Մաշտոցի անուան մատենադարանի թիւ 5707 ձեռագրում նրա բանաստեղծութիւնների ու պոէմների ընդունուած դասաւորութիւնը՝ հրատարակութեան պատրաստելիս վերադասաւորել է դրանք՝ հիմք ընդունելով Մաղնիսիայի ձեռագրի Տ. Պաւլեանի նկարագրութիւնը: Ինչպէս տեսանք, Գրիգոր Տղան խնդրոյ առարկայ Ողբաշարքն անուանել է իր ստեղծագործական «երախայրիք»: Գուցէ հենց դա նկատի առնելով է յիշեալ ձեռագրի գրիչ Յակոբ Ոստանցին, որն այն ընդօրինակել է 1386 թ. «Ոստան քաղաքում եւ այլ եւ այլ վայրերում» (էջ 74), դասաւորել այդ իսկ ձեռով: Բայց եթէ նոյնիսկ ընդունենք, թէ Յակոբ Ոստանցու կատարած դասաւորութիւնն արդիւնք է զուտ պատահականութեան, ապա այդ դէպքում ինչ հիմք ու ապացոյց ունենք ասելու, թէ նոյնպիսի պատահականութեան արդիւնք չէ նաեւ 1526թ. Աղթամարում Յակոբ կրօնաւորի (էջ 69) ընդօրինակած՝ Մաղնիսիայի թիւ 3 ձեռագրում առկայ դասաւորութիւնը: Չէ՞ որ եթէ թիւ 5707 ձեռագիրը ուրիշ ոչ մի առաւելութիւն չունենար Մաղնիսիայի ձեռագրի համեմատութեամբ, ապա միայն ժամանակի հանգամանքը նկատի առնելու դէպքում նախապատուութիւնը պէտք է տրուեր հնագոյն ձեռագրին: Ճիշտ է, հայ մատենագրութեան պատմութիւնից յայտնի են փաստեր, երբ նորագոյն ձեռագիրը գերադասելի է աւելի հին ձեռագրից, բայց դրանք բացառութիւններ են, իսկ իբրեւ կանոն, նախընտրելի է նոյնատիպ ձեռագրերի հնագոյն օրինակը: Բայց այս դէպքում ի նպաստ թիւ 5707 ձեռագրի է ոչ միայն ժամանակի պարագան, այլեւ այն, որ Մաղնիսիայի ձեռագիրը, ցաւօք, վաղուց կորած է, մինչդեռ առաջինն անխաթար վիճակում է, եւ աշխատասիրողն ազատօրէն օգտուել է նրանից:

Քանի որ առիթ է ստեղծուել, կ'ուզենայի կատարել փաստական մի փոքրիկ ճշգրտում եւս. խօսելով Գրիգոր Տղայի գրչագրական գործունէութեան մասին, Ա. Մնացականեանը գտնում է, որ նա անձամբ կամ այլոց

յանձնարարելով, ստեղծել է դրչական պատկառելի ժառանգութիւն, որը թէև, ցաւօք, մեզ չի հասել, բայց պահպանուել են նրա գրչին պատկանող շփածոյ մի շարք յիշատակարաններ, որոնք, որպէս ամբողջական շարք ընդօրինակուած են Մաշտոցի անուան մատենադարանի թիւ 4207 ձեռագրում: Ընդունելով հանդերձ, որ դրանք կազմում են «մի ամբողջութիւն» (էջ 31), բայց եւ այնպէս նկատի առնելով, որ նրա առանձին հատուածներ իրարից բաժանուած են «կարմիր գլխատառերի օգնութեամբ», գիտնականը դրանք դիտում է որպէս «առնուազն» տասներեք միաւորից բաղկացած շարք: Մի կողմ թողնելով դրանց բոլորի «մի ամբողջութիւն» կամ «շարք» լինելու հարցը, որը, անշուշտ, կարօտ է լուրջ քննութեան, ասենք միայն, որ շէնք կարող ընդունել Ա. Մնացականեանի այն պնդումը, որ դրանցից Գ. եւ Դ. միաւորները «գրուած են 1185 թուականին»: Այս՛, Գ. միաւորն իսկապէս գրուած է այդ թուականին, որը պարզ է ի պարզ երևում է հեղինակի յիշատակարանից: Մինչդեռ Դ. միաւորը նախ՝ յիշատակարան չէ, որովհետեւ Գրիգոր Տղան ինքն այն անուանում է «կտակ» (էջ 228, տ. 38) կամ «ճառ բաղձանացս» (էջ 230, տ. 104), երկրորդ՝ ավարտել է յաջորդ՝ 1186 թուականին: Այդ են հաստատում հեղինակի հետեւեալ տողերը.

Աւարտեցի զճառ բաղձանացս:
 Մինչ էր թուականն Հայկակա
 Վեցնարիւրից տասն եռակա.
 Նոյն եւ քառից եզականաց
 Խարդեալ ընդ սոյնս միակաց:

(էջ 230, տ. 100—104)

Դժուար չէ տեսնել, որ բանաստեղծը վերջին տողում եւս թելադրում է թուաբանական ինչ-որ գործողութիւն եւ թիւ, որը, փաստօրէն, անտեսուել է: Մինչդեռ հեղինակի այդ պահանջները կատարելու դէպքում, այսինքն՝ ստացուած արդիւնքին մէկ գումարելով (բարդեալ ընդ սոյնս միակաց), կը ստանանք 1186 թ., որը եւ Դ. միաւորի գրութեան թուականն է: Իսկ սա բնաւ անկարելի չէ, որովհետեւ այդ երկու միաւորների գրութեան թուականի նոյնացման հետեւանքով նոյնացուել են նաեւ դրանց ժանրերը՝ յայտարարուել «նոյն ընդօրինակութեան» տարբեր յիշատակարաններ: Իրականում Դ. միաւորը ոչ թէ յիշատակարան է, այլ, հեղինակի իսկ բնորոշմամբ, «կտակ» կամ «ճառ բաղձանաց», այսինքն՝ բարոյախրատական բանաստեղծութիւն՝ ուղղուած տուեալ ձեռագրի պատանի ընթերցողին:

Գրիգոր Տղայի ինքնակենսագրական նորայայտ փաստերի լոյսի տակ, բնական է, ծագում են մի շարք կարելի՛ր հարցեր նրա կեանքի, գործունէութեան եւ գրական ժառանգութեան գնահատութեան վերաբերեալ, որոնց բոլորին նպատակ շունենալով անդրադառնալու, կանգ առնենք միայն մի քանիսի վրայ:

Իր Ողբաշարքի երկրորդ տղբում, որը ծաւալով զիջում է միայն առաջինին, հայրապետ բանաստեղծը գրում է.

Չամենայն մասունս հոգւոյ իմոյ
 Մախեցի առ բժիշկս շարառուստս
 Եւ ոչինչ օգտեցայ՝
 Եւ զերկոտասաճ ամս միայն,
 Այլ զամենայն ժամանակս կենաց իմոց:

(էջ 375, տ. 181—185)

Իրաւամբ հարց է ծագում. այդ ի՞նչ տասներկու տարուայ մասին է խօսքը, որին աւելացնում է նաեւ «զամենայն ժամանակս կենաց իմոց» եւ ցաւով ու ափսոսանքով խոստովանում, որ շնայած իր գործադրած ջանքերին, փաստօրէն, ոչ մի լուրջ արդիւնքի չի հասել, որովհետեւ բոլոր նրանք,

ում դիմել է ինքը, եղել են «բժիշկա շարարուեստս»: Այս տասներկու տարուայ առեղծուածը լուծելու առայժմ միակ փորձը կատարել է Ա. Մնացականեանը, որը գրում է. «Այդ 12 տարին, հաւանաբար, հեղինակը հաշուել է իր այն վճռական որոշումից յետոյ, երբ գործնականօրէն ձեռնարկել է հայ-բիւզանդական եկեղեցիների մերձեցման բանակցութիւններին, Հոռովկայի ժողովի նախապատրաստմանը եւ իր կաթողիկոս ընտրուելու ժամանակին» (էջ 127): Անշուշտ, այսպիսի պատասխանը կարող էր ընդունելի լինել, եթէ շհականէր նորայայտ փաստերին: Բանն այն է, որ նշուած երեք իրողութիւններից՝ «հայ-բիւզանդական եկեղեցիների մերձեցման» բանակցութիւններ, «Հոռովկայի ժողովի» նախապատրաստում եւ «կաթողիկոս ընտրուելու» ժամանակ, յայտնի է միայն «կաթողիկոս ընտրուելու» տարեթիւը՝ 1173 թ., որին 12 տարի գումարելու դէպքում կը ստանանք 1185 թ.: Այսինքն՝ այդ բացատրութիւնը ճիշտ կը լինէր, եթէ Գրիգոր Տղան իր Ողբաշարքն աւարտած լինէր 1185 թ., իսկ, ինչպէս տեսանք, աւարտել է դրանից 3 տարի առաջ՝ 1182 թ., որից 12 տարի հանելու դէպքում կ'ունենանք 1170 թ.: Յայտնի է նաեւ, որ այդ թուականին դեռ ողջ էր Ամենայն Հայոց Հայրապետ Ներսէս Շնորհալին, որի մահուանից (1173 թ.) յետոյ միայն Գրիգոր Տղան բաւական մեծ դժուարութիւններով ընտրուեց կաթողիկոս: Արդ՝ եթէ այսպիսին է պատմական իրականութիւնը, ուրեմն ինչո՞ւ է Գրիգոր Տղան շարարուեստ բժիշկներին իր դիմելու սկիզբը դնում կաթողիկոս ընտրուելուց երեք տարի առաջ՝ 1170 թ.: Առայժմ չունենալով անառարկելի փաստեր, հակուած եմ ենթադրելու, որ հաւանաբար 1170 թ. Ներսէս Շնորհալին իրբեւ հետատես Հայրապետ, մահուանից դեռ երեք տարի առաջ՝ հաշուի առնելով իր ծերունազարդ հասակն ու առողջական տկար վիճակը, ինչպէս նաեւ ստեղծուած քաղաքական արտակարգ բարդ կացութեան պայմաններում օրրստօրէ ամբարպետուող հայկական պետականութեան եւ ապագայում հաստատուելիք ինքնուրոյն թագաւորութեան կեանքում հայոց կաթողիկոսի խաղալիք կարեւոր դերը եւ նոր կաթողիկոսի ընտրութեան հետ կապուած լուրջ դժուարութիւնները, Գրիգոր Տղային նշանակել էր իր տեղապահ կամ փոխանորդ՝ օժտելով նրան ազատօրէն գործելու լայն իրաւունքներով: Այլ խօսքով առած՝ միանգամայն հնարաւոր եմ համարում, որ սկսած 1170 թ. Գրիգոր Տղան ըստ էութեան եղել է փաստացի կաթողիկոս: Կարծում եմ իմ այս ենթադրութիւնը միանգամայն տրամաբանական ու ընդունելի կը դառնայ, եթէ նկատի ունենանք եւ այն լուրջ դժուարութիւնները, որոնք իսկապէս ծագեցին Շնորհալուց յետոյ նոր կաթողիկոսի ընտրութեան կապակցութեամբ, եւ Գրիգոր Տղան կարողացաւ յաղթահարել դրանք: Պարզվում է, որ Գրիգոր Տղան ներկայ չի եղել Շնորհալու մահուանից հետո 1173 թ. կայացած կաթողիկոսական ընտրութեանը, որից օգտվելով կաթողիկոս է ընտրուել Շնորհալու միւս եղբորորդին՝ Գրիգոր Ապիրատը, որովհետեւ Տղան այդ ժամանակ կատարում էր քաղաքական լուրջ առաքելութիւն, որն անուղղակիորեն վկայում է մեր ենթադրութեան օգտին: Շնորհալուց հետո, ասում է դէպքերի ժամանակակից Գրիգոր գրիշը, «բազում յուզմունք խոռվութեանց ներքոյ եւ արտաքոյ յարեան սակս ոչ հանդիպելոյ ի միջի բարեհոգակեալն անուն Տէր Գրիգոր եղբարորդի կաթողիկոսին, որում անդարձ կտակն հաստատեալ պահիւր յաւագ կաթողիկոսէն Հայոց Տէր Գրիգորիսէ, կացուցանել զսա փոխանորդ եղբար իմոյ տեսնն ներսիսի: Որում յառաջագէտ յեալ այնմ կտակի հարց սրբոց եպիսկոպոսաց եւ վարդապետաց. նաեւ զլաւութիւն բարուցն եւ զսրբութիւն անձին տեսեալ՝ իբր ի հրամանէ Աստուծոյ ժողովեալք, գրեն փութանակի գալ հասանիլ առանց իրիք պատաղանաց. զի մի՛ ասեն, աւերեցի տունն՝ որ արեամբ ստացեալ է: Եւ վասն որոյ երթեալն էր համոզել

ի խաղաղութիւն ի մէջ կրկուց ոստիկանացն, զայն ի բաց տային թողուլ. եւ բերեալ հասուցին յանառիկ ամբողջն՝ Հոռմկլայ անուն կոչեցեալ. որ իւրում նախնեացն էր աթոռ սեպհական, եւ հաստատեցին զնա յաթոռ վերակացութեան բազում խրախուժեամբ եւ մեծ հանդիսս⁶: Ճիշտ է, «այդպիսի կտակ է թողած եղիլ նաեւ Ներսէս Շնորհալիին» (էջ 21), բայց դրանք, իմ կարծիքով, լինելով շատ կարեւոր, դեռ բաւարար չէին ընտրուած կաթողիկոսից հայրապետական աթոռն ու իշխանութիւնը վերցնելու համար, այլ հարկաւոր էր ունենալ իրաւական ու բարոյական աւելի զօրաւոր կոուաններ: Զէ՞ որ հայ եկեղեցու պատմութիւնից յայտնի են դէպքեր, երբ շեն կատարուել ոչ միայն հանգուցեալ հայրապետների «հրամաններն» ու կտակները, այլեւ ողջների կոնդակները: Վերջապէս, հազուադէպ շեն նաեւ աթոռակից կամ հակաթոռ կաթողիկոսների օրինակները: Բոլոր դէպքերում, եթէ ճիշտ է Գրիգոր Տղայի Ողբաշարքի գրութեան թուականի իմ վերծանութիւնը, իսկ դրանում ոչ մի կասկած չունեմ, ապա կաթողիկոս քանաստեղծի «ոչ զերկոտասան ամս միայն» ինքնակենսագրական տեղեկութեան նորովի քննութիւնն ու մեկնաբանութիւնը դառնում է հրատապ: Նոյն ձեւով խիստ կարեւորում է նաեւ բանաստեղծի «այլ զամենայն ժամանակս կենաց իմոց» արտայայտութիւնը, որով հայրապետ քանաստեղծը, իմ կարծիքով, ակնարկում է մինչեւ 1170 թ. իր ծաւալած հասարակական-քաղաքական եռանդուն գործունէութեան մասին: Կասկածից վեր է, որ հենց Գրիգոր Տղայի՝ նման գործունէութեան համար են նախորդ երկու ականաւոր հայրապետները, նրան վեր դասելով իրենց միւս բոլոր արիւնակից բարձրաստիճան հոգեւորականներից, յարմար տեսել հայրապետական աթոռն ստանձնելու եւ իրենց սկսած գործը շարունակելու համար, ինչպէս եւ եղաւ:

Լրացուցիչ ուսումնասիրութեան ու բացատրութեան կարիք ունի նաեւ Գրիգոր Տղայի մասին պատմական սկզբնաղբիւրներից յայտնի մի շատ կարեւոր տեղեկութիւն, որը գալիս է նրա մերձաւորագոյն բարեկամ ու գաղափարական զինակից Ներսէս Լամբրոնացուց: Վերջինս իր յիշատակարաններից մէկում գրում է, որ «թուին Ոսթ (1193), յութ եւ տասներորդ ամի նորին հայրապետութեան, խնդիր եղեւ առ նոյն սրբազանն՝ ի քաղաքաց եւ ի գաւառաց բնակչաց՝ քաղաքական արիւնացն» (էջ 41—42): Փաստօրէն ըստ այս տեղեկութեան Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան սկիզբը համընկնում է 1175 թ., քանզի 1193—18=1175: Քանի որ հայագիտական գրականութեան մէջ Գրիգոր Տղայի կաթողիկոսական տարիները միաձայն համարում են 1173—1193 թթ., եւ սովորաբար ասում է, որ նա կաթողիկոսել է շուրջ քսան տարի, ուստի այս ակնյայտ հակասութիւնը լուծելու համար Ա. Մնացականեանը, Լամբրոնացու տեղեկութիւնը համարելով շփոթութիւն, գրում է. «Գրիգոր Տղային կատարուած դիմումը պիտի տեղի ունեցած լինէր ոչ թէ 1193ին, այլ 1191ին, որովհետեւ դա տեղի է ունեցել նրա կաթողիկոսութեան 18րդ տարում (1173+18=1191)» (էջ 42, ծանոթագր. 91, կետ 2): Անշուշտ, այլ պարագաների դէպքում, ասենք, եթէ տուեալ յիշատակարանի հեղինակը լինէր սովորական անձնաւորութիւն, շարքային գրիչ կամ նկարագրուող դէպքերից բաժանուած լինէր երկար ժամանակահատուածով, առաջարկուած ուղղումը կարելի էր ընդունել: Բայց ներկայ դէպքում մենք գործ ունենք Ներսէս Լամբրոնացու նման բացառիկ հանճարի տէր հեղինակի հետ, որը նկարագրուող դէպքերի անմիջական ժամանակակիցն էր, ականատեսն ու մասնակիցը, ուստի հազիւ թէ նա այդպիսի բացահայտ սխալ թոյլ տար, այսին-

⁶ Կ. Սրուանտեանց, Թորոս աղբար, մասն Բ, Կ. Պոլիս, 1984, էջ 442—443:

քըն՝ 1191ի փոխարէն (այն հայերէն տառերով ու հայկական տոմարով կը լինէր ՈՅ) գրէր ՈՅԲ (1193): Եթէ նոյնիսկ ընդունենք, որ Լամբրոնացին այդ յիշատակարանը թողել է կեանքի վերջին տարում՝ 1198 թ., նորից դժուար է պատկերացնել, որ ուժերի ծաղկման շրջանում գտնուող 45-ամեայ հանձարեղ մտածողը կարող էր այդ աստիճան շփոթել ընդամէնը 5ամեայ հնութիւն ունեցող փաստերը: Ուրեմն մնում է ենթադրել, որ Լամբրոնացին շփոթել է ոչ թէ Գրիգոր Տղային դիմելու թուականը, այլ նրա կաթողիկոս ընտրուելու թուականը, ուստի ուղղել ցանկանալու դէպքում պէտք էր ոչ թէ 1173ին գումարել 18, այլ կամ 18ը դարձնել 20, կամ 1193ից (ՈՅԲ) հանել 18, որը կը տար 1175 թ.: Վաւանբար, Ա. Մնացականեանն զգալով, որ առաջինն անկարելի է, որովհետեւ ասուած է շատ յստակ՝ «յուժ եւ տասներորդ ամի նորին հայրապետութեան», իսկ երկրորդ դէպքում ստացուած արդիւնքը՝ 1175 թ., չի համապատասխանում հայագիտական գրականութեան մէջ ընդունուած տարեթուին, ընտրել է երրորդ ուղին՝ 1173ին գումարել է 18 եւ ըստացել 1191 թ., որը եւ, հակառակ Լամբրոնացու պարզ եւ յստակ ասուած 1193ի (ՈՅԲ), առաջարկում է որպէս Գրիգոր Տղային դիմելու թուական: Ըստ այս ուղղման ստացում է, որ Լամբրոնացին ճիշտ չի յիշել Գրիգոր Տղային դիմելու անհամեմատ մօտ՝ 1—5 տարուայ վաղեմութիւն ունեցող պատմական իրողութիւնը, բայց ճիշտ է յիշել 20—25 տարի առաջ նրա կաթողիկոս ընտրուելու թուականը: Ով քիչ թէ շատ ծանօթ է 12րդ դարի երկրորդ կէսի այս երկու հսկայ գործիչների կենսագրութեանը, նրանց համագործակցութեանն ու մէկը միւսի կեանքում խաղացած դերին, կ'ընդունի, որ Լամբրոնացին չէր կարող չյիշել Գրիգոր Տղայի կաթողիկոսութեան սկիզբը, քանզի դա որոշ իմաստով շրջադարձային եղելութիւն էր իր իսկ կեանքում: Բաւական է ասել, որ 1173 թ. նա 20 տարեկան էր, իսկ մի քանի տարի հետո Գրիգոր Տղայից էր ձեռնադրուել վարդապետ ու եպիսկոպոս, ստացել հոգեւոր առաջնորդի պաշտօն, իսկ այնուհետեւ, մինչեւ Տղայի մահը, վայելել նրա մշտական աջակցութիւնն ու հովանաւորութիւնը, իր հերթին հաւատարմօրէն ծառայել նրան, եղել նրա զինակիցն ու «աջ բազուկը»: Իսկ ի՞նչ ենք առաջարկում մենք, ինչպէս լուծել կամ ինչով բացատրել խնդրոյ առարկայ ակնյայտ հակասութիւնը Լամբրոնացու յիշատակարանի եւ պատմագիտութեան մէջ ընդունուած ժամանակագրութեան միջեւ: Իմ կարծիքով Լամբրոնացու տեղեկութեան մէջ պէտք է տեսնել Գրիգոր Ապիրատի եւ Գրիգոր Տղայի միջեւ կաթողիկոսական աթոռի համար մղուած պայքարի արձագանքը. պայքար, որը, ըստ առանձին սկզբնաղբյուրների, եղել է բաւական սուր ու աղմկոտ եւ աւարտուել է Տղայի յաղթանակով: Ծիշտ է, աղբիւրներում չի աւուտ, թէ որքան է տեսել այն, բայց ելնելով այդ պայքարի նկարագրութեան առանձին երեւոյթներից, կարելի է ենթադրել, որ այն տեսել է բաւական երկար: Այդ տեսակէտից արժէքաւոր համարելով «դէպքերին ժամանակակից Գրիգոր գրչի երկու յիշատակարանները» (էջ 21), Ա. Մնացականեանը մէջ է բերում դրանցից մէկի հատուածը, ուր աւուտ է, որ Շնորհալուց յետոյ «բազում ամպրոպ խռովութեան յարեան վերայ ներքոյ եւ արտաքոյ յաւտարաց եւ սուտ եղբարց, զոր աւելորդ համարեցաք գրել: Եւ ապա ի հաւանութենէ բոլոր ազգիս եպիսկոպոսաց, սրբոց հարց եւ վարդապետաց, վանականաց եւ աշխարհայնոց, զաւրականաց եւ զաւրապետաց եւ ի հրամանէ տեառն Գրիգորիսի եւ յանդարձ կտակէն եհաս վիճակ հայրապետութեան եղբարրորդուն նորին տեառն Գրիգորի մականունն Տղայ կոչեցիլոյ» (նույն տեղում): Արդէն գիտենք, որ 1173 թ. Շնորհալու մահանալուց յետոյ մօտաւորապէս նոյն-

պիսի անձանց մասնակցութեամբ մի հաւաք կամ ժողով կայացել ու կաթողիկոս էր ընտրել հանգուցեալ հայրապետի միւս եղբորորդուն՝ Գրիգոր Ապիրատին: Թէ ինչո՞ւ Գրիգոր Տղան չէր մասնակցում այդ ընտրութեանը, այս հարցին մասամբ անդրադարձանք վերը՝ «Ոչ զերկոտասան ամս միայն» արւայայտութեան կապակցութեամբ: Ասենք միայն, որ այդ ընտրութեամբ անիրաւուած զգալով իրեն, Գրիգոր Տղան մտնում է պայքարի մէջ, որին, ինչպէս գրիչն է ասում, մասնակից են դառնում նաեւ օտարները: Արդիւնքը լինում է այն, որ գումարում է նոր հաւաք կամ ժողով, որին մասնակցում են «բոլոր ազգիս», ասել է թէ ոչ միայն Կիլիկիայի, այլեւ Մայր Հայաստանի, եպիսկոպոսներ, սուրբ հայրեր եւ վարդապետներ, վանականներ ու աշխարհականներ, զօրականներ ու զօրապետներ՝ եւ հիմք ընդունելով Գրիգոր Գ. եւ Ներսէս Շնորհալի հանգուցեալ հայրապետների կտակները, ինչպէս նաեւ ուրիշ այլ հանգամանքներ, մերժում են Գրիգոր Ապիրատին, ընտրում Գրիգոր Տղային: Արդ՝ հաշուի առնելով այս ամէնը եւ յատկապէս ժամանակի հաղորդակցութեան միջոցները, արդեօք չե՞նք կարող ասել, որ, ամենայն հաւանականութեամբ, կաթողիկոսական պայքարը վերջնականապէս աւարտուել է 1175 թ. որը եւ նկատի ունենալով, Ներսէս Լամբրոնացին Գրիգոր Տղայի լիիրաւ կաթողիկոսութեան սկիզբը համարել է հենց այդ թուականը եւ ըստ այդմ՝ «ՈՒԽ» (1193 թ.) թուականը դիտել «յուժ եւ տասներորդ ամի նորին հայրապետութեան»:

Նոր երանգ է ի յայտ գալիս նաեւ Հոռնի Լուցիոս պապի հետ Գրիգոր Տղայի հաստատած նամակագրութեան պատմութեան մէջ: Եթէ, ինչպէս վաղուց պարզուած է, իր առաջին նամակը Գրիգոր Տղան գրել է 1184 թ. վերջերին⁷, իսկ աւելի ստույգ՝ դեկտեմբերի 3ին⁸, ապա այժմ յայտնի է դառնում, որ նա այդ պատմական քայլը կատարել է ոչ թէ բիզանդացիներից հիասթափուելուց «անմիջապէս»⁹ յետոյ, այլ տարիներով մտածելուց ու կըշռադատելուց յետոյ, ընդ որում ոչ թէ միամտորէն հաւատալով ու վստահելով լատիններին, այլ թերահաւատութեամբ ու երկբայութեամբ, որպէս միայն ու միայն՝ հարկադրական քայլ եւ հնարաւոր ելք քաղաքական անելանելի կացութիւնից: Դրանով աւելի է հարստանում նրա նկարագիրը որպէս քաղաքական գործչի, ընդձուում նրա անհատականութիւնը: Այդ են հաստատում Ողբաշարքի շորորդ ողբի հետեւեալ տողերը.

Ուտի եւ երկեա՛ գրոտս.

Եթէ գուցէ վա՛յ գիս լինի՝

Ընդերկարելով թշուառականիս պանդխտանալ

Ի մէջ հարկաց սևաբորմից ստուերաբնակաց

Եւ ընդ նո՛օֆ.

Որոց ստելի-համբոյրն սրբութեան:

Եւ յայսմանէ՛ գարհուրելով՝

Ի յերկուցն կրից պատահմանց

Ի Յունականացն ասեմ դժնդակաց

Եւ զկնի Լկողացն:

Հայեցի վահան փրկութեան,

Սաղաւարտ ամբութեան.

Ալէն յաղթութեան.

Նետս խաղաղութեան՝ զո՞ արդեօֆ.

(էջ 385, տ. 34—47)

⁷ Տե՛ս Յ. Քիրտեան, Նիթեր պուլկարահայոց պատմութեան համար. հայք ի Պուլկարիա սկիզբէն մինչև 1700, «Բաղմավէպ», 1927, թիւ 11, էջ 333:

⁸ Տե՛ս Հ. Կ. Ամատունի, Հայ Եկեղեցւոյ ճշմարիտ դիմագիծը եւ Գրիգոր կաթողիկոսներու կատարած պատմական դերը, «Բաղմավէպ», 1946, թիւ 3—5, էջ 144:

⁹ Յ. Քիրտեան, նշվ. աշխ., էջ 333:

Միանգամայն հասկանալի է, որ եթէ «զկնի եկողացն»ի կամ յատինների հարցը 1182 թ. իր գեղարուեստական արտայայտութիւնն է գտել Գրիգոր Տղայի Ողբաշարքում, ապա դա պէտք է նրան հետաքրքրած լինի վաղուց: Իսկ այն փաստը, որ այսքան երկարատե տատանումներից ու կասկածներից յետոյ, նա այնուանենայնիւ որոշել է դիմել Հռոմի պապին, իսկապէս վկայում է այն մասին, որ Գրիգոր Տղան «նոյնպէս դէմ է եղել եկեղեցական զիջումներին, սակայն ստիպուած է եղել դիմել այդ միջոցառումին՝ ելնելով երկրի շահերից, քաղաքական պայմաններից, ժողովրդի ծանր վիճակից» (էջ 127):

Իբրեւ ամփոփում վերը շարադրուածի, կարող ենք ասել, որ Գրիգոր Տղայի ինքնակենսագրական նորայայտ փաստերը գալիս են հարստացնելու մեր պատկերացումները 12-րդ դարի երկրորդ կէսում Կիլիկեան Հայաստանի քաղաքական բարդ կացութեան եւ այդ պայմաններում հմտօրէն գործած Հայոց հայրապետի եւ, ի հարկէ, Լեւոն Մեծի մասին: Այդ պատկերացումները, վստահ ենք, կ'արող են 'աւելի ընդլայնուել ու հարստանալ յատկապէս Գրիգոր Տղայի գրական ժառանգութեան մասնագիտական նորովի վերլուծութեան ու գնահատութեան շնորհիւ, որը թողնում ենք հայ գրականութեան պատմութեան մասնագէտներին:

Г. К. МИРЗОЯН — Новые факты о жизни и деятельности Григора Тга. — По-новому перечитав произведения видного армянского общественно-политического деятеля, сановного священника и знаменитого поэта XII в. Григора Тга (Отрок), автор статьи обнаруживает тайнописи, из расшифровки которых выясняется, что Тга стал поэтом в 58 лет, родился не в 1133 г., как было принято считать до сих пор в арменоведческой литературе, а в 1124 году. Далее: Григор Тга избран католикосом не в 40, а в 49 лет и после 20-и лет пребывания в этом высоком духовном звании умер в 69-летнем возрасте, что, по мнению исследователя, нормальный срок жизни для средневековья. Тем самым отвергается предположение некоторых ученых о его неестественной смерти и причастности Левона Великого к ней.